ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր.գ. թ., ավագ դասախոս ի.գ.թ. Տոնոյան Լիլիթ Ժորայի

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Սնանկության իրավական կարգավորումը

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք» (հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Որպես ուսումնական դասընթաց "Սնանկության իրավական կարգավորումը" ուսումնասիրում է սնանկության ինստիտուտի ծագումը և զարգացման պատմությունը, սնանկության ինստիտուտի հասկացությունն ու հատկանիշները ըստ ՀՀ օրենսդրության, ինչպես նաև սնանկության ողջ գործընթացը՝ սկսած սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելուց մինչև գործի ավարտը:

Սնանկությունը որպես տնտեսական երևույթ գործարարական հարաբերությունների զարգացման արդյունքում առաջացող կարևորագույն հատկանիշներից է: Սնանկության ինստիտուտի ծագումն ու գոյությունը պայմանավորված է շուկայական հարաբերությունների ծավալմամբ և լավագույնս է արտահայտում այդ հարաբերությունների ընդգծված մրցակցային բնույթը:

Սնանկության ինստիտուտի բազմակողմանի իրավական կարգավորումը երկրում տնտեսական կայունության ապահովման կարևոր գործոն է հանդիսանում: Դրա հետ կապված անհրաժեշտություն է առաջանում հատուկ դասընթացի անցկացումը ժամանակակից պահանջներին համապատասխան:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակը ուսանողի կողմից սնանկության ինստիտուտի վերաբերյալ տեսական գիտելիքների, ՀՀ քաղաքացիական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության յուրացումն է ու դրա գործնականում կիրառման ուսումնասիրումը:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

- ուսանողի մոտ ձևավորել ամբողջական պատկերացում մրցութային իրավունքի գիտության զարգացման հիմնական միտումների վերաբերյալ,
- յուրացնել սնանկության գործընթացի իրավական կարգավորման ինչպես գործնական, այնպես էլ տեսական հարցերը:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտն են կազմում սնանկության հասկացությունը և հատկանիշները, Սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելը, սնանկության

իրավահարաբերության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև սնանկության գործում առաջացող հարաբերությունները:

Դասընթացի առարկան ինչպես օբյեկտիվ իրավունքն է և օրենսդրության ենթաճյուղը, այնպես էլ կորպորատիվ իրավունքի գիտությունը:

Դասընթացի մուտքային պահանջները

"Սնանկության իրավական կարգավորումը" դասընթացն ուսումնասիրելուց առաջ ուսանողները պետք է ունենան քաղաքացիական իրավունքի, գործարարական իրավունքի, առևտրային իրավունքի, ինչպես նաև քաղաքացիական դատավարության իրավունքի վերաբերյալ գիտելիքներ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Քաղաքացիական իրավունք,
2. Գործարարական իրավունք,
3. Առևտրային իրավունք,
4. Քաղաքացիական դատավարության իրավունք:

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. վերլուծել քաղաքացիական, գործարարական և քաղաքացիական դատավարության իրավունքի իրավունքի նորմերը,
2. ազատորեն կողմնորոշվել սնանկության հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համակարգում:

- *ընդհանրական իմացական հմտությունները՝*

վիճելի իրավահարաբերություններում գտնել համապատասխան լուծումներ:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- *ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝*

1. Կատարել սնանկության վերաբերյալ օրենսդրության համեմատական վերլուծություն Հայաստանում, Ռուսաստանում և այլ շուկայական տնտեսություններում,

2. Ճիշտ կիրառել սնանկության հարաբերությունները կարգավորող օրենսդրության դրույթները,

3. Կազմել սնանկության դիմում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան

4. Կազմել սնանկության գործընթացին վերաբերող փաստաթղթեր:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասախոսությունները և գործնական պարապմունքները որպես կրթական գործընթացի ձևեր լայն հնարավորություններ են ընձեռում ճանաչողական և կրթական խնդիրները լուծելու համար: Դասախոսությունների թեմաները համապատասխանում են ծրագրի բաժիններին և թեմաներին: Դասախոսությունների նախապատրաստման հիմքը դասընթացի պլանն է, որը պարունակում է քննարկվող հարցերը և գործնական պարապմունքին նախապատրաստման համար առաջարկվող գրականությունը: Գործնական պարապմունքը, որպես ուսուցման ակտիվ ձև, ուսանողից պահանջում է խորը և ինքնուրույն նախապատրաստություն՝ քննարկման համար առաջարկվող հարցերի վերաբերյալ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Սնանկության իրավական կարգավորումը.»՝ 3 ակադեմիական կրեդիտ (32 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել առաջին ուսումնական տարվա առաջին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**18**
1.1.1. Դասախոսություններ	**8**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**10**

1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**86**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**50**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	**36**
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**16**
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	**20**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Սնանկության ինստիտուտի ծագումը և զարգացումը: Սնանկության ինստիտուտի հասկացությունը և հատկանիշները	**2**	**1**	**1**
Թեմա 2. Սնանկության վերաբերյալ դիմումը, դրա բովանդակությունը և կից փաստաթղթերը: Դատարան դիմելու պարտականությունը	**2**	**1**	**1**
Թեմա 3. Սնանկության վտանգի վարույթը և դրա առանձնահատկությունները	**2**	**1**	**1**
Թեմա 4. Սնանկ ճանաչելը և կողմերի հաշտության համաձայնությունը	**2**	**1**	**1**
Թեմա 5. Սնանկության իրավահարաբերության մասնակիցները: Պարտատերերի ժողովը և խորհուրդը	**2**	**1**	**1**
Թեմա 6. Պարտատերերի պահանջները: Պահանջների հաստատումը: Պարտապանի առողջացման ծրագիրը	**2**	**1**	**1**

Թեմա 7. Պարտապան իրավաբանական անձի լուծարման և պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը: Չապահովված պահանջների հերթականությունը և բավարարման կարգը	**3**	**1**	**2**
Թեմա 8. Սնանկության վերաբերյալ գործի ավարտը: Ֆիզիկական անձանց սնանկության առանձնահատկությունները: Սնանկության պարզեցված ընթացակարգերը	**3**	**1**	**2**
Ընդամենը	**32**	**16**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Սնանկության ինստիտուտի ծագումը և օրենսդրության զարգացման պատմությունը՝ նախահեղափոխական օրենսդրությունը, շուկայական տնտեսության անցման շրջանի օրենսդրությունը, ժամանակակից օրենսդրությունը և զարգացման միտումները: Սնանկության ինստիտուտի հասկացությունը, էությունը և ընդհանուր բնութագիրը

Թեմա 2. Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերը և անվճարունակության հատկանիշները ըստ ՀՀ օրենսդրության: Սնանկության վերաբերյալ դիմումը, դրա բովանդակությունը և կից փաստաթղթերը: Դատարան դիմելու պարտականությունը: Սնանկության վերաբերյալ դիմումի ընդունումը և մերժումը: Սնանկության նախազգուշական միջոցները: Կեղծ և կանխամտածված սնանկություն

Թեմա 3. Սնանկության վտանգի վարույթը: Սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելը: Պարտապանի սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը բավարարելու հետևանքները: Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (մորատորիումը)

սնանկության վտանգի վարույթում: Պարտապանին սնանկ ճանաչելը սնանկության վտանգի դիմումի հիման վրա

Թեմա 4. Սնանկ ճանաչելը և կողմերի հաշտության համաձայնությունը: Սնանկ ճանաչելը կամավոր սնանկության դիմումի հիման վրա: Պարտապանին սնանկ ճանաչելը հարկադրված սնանկության դիմումի հիման վրա: Դատարանի՝ սնանկության գործով կայացված դատական ակտերի ուժի մեջ մտնելը: Պարտապանին սնանկ ճանաչելու հետևանքները

Թեմա 5. Սնանկության իրավահարաբերության մասնակիցները: Պարտատերերի ժողովը և խորհուրդը: Ժողովի որոշումների ընդունման կարգը: Սնանկության ժամանակավոր կառավարիչները և կառավարիչները: Կառավարչի ընտրությունը և նշանակումը: Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը:

Կառավարչի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը: Կառավարչի լիազորությունները: Կառավարչի վարձատրությունը Բաժնետիրական ընկերությունը որպես կորպորացիայի տեսակ: Բաժնետերերի իրավունքների առաջացումը և դադարեցումը: Բաժնետիրոջ (մասնակցի) կորպորատիվ իրավունքները: Բաժնետիրոջ (մասնակցի) կորպորատիվ պարտավորությունները:

Թեմա 6. Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (մորատորիում): Պարտատերերի պահանջները: Ապահովված իրավունքի առարկայի իրացումը: Ապահովված պահանջները և դրանց բավարարումը: Պահանջների հաստատումը: Պարտապանի առողջացման ծրագիրը: Ֆինանսական առողջացման ծրագրի պարտադիր պայմանները: Ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումը: Ֆինանսական առողջացման ծրագրի ավարտը

Թեմա 7. Պարտապան իրավաբանական անձի լուծարման և պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը: Պարտապանի գործունեության կասեցումը: Պարտապանի գույքի վաճառքը: Լուծարման ընթացքում պարտապանին պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով: Պարտապանին պատկանող գույքի վաճառքն ուղղակի գործարքով: Գույքի վաճառքից ստացված միջոցների բաշխումը: Չապահովված պահանջների հերթականությունը և բավարարման կարգը: Ստորադաս չապահովված պահանջները: Պահանջների բավարարման կարգը

Թեմա 8. Սնանկության գործի ավարտը պարտապանի լուծարումով: Սնանկության վերաբերյալ գործի ավարտը պարտատերերի կողմից պահանջներից հրաժարվելու, պահանջներ չներկայացվելու կամ պահանջների բավարարման դեպքում: Սնանկության վերաբերյալ գործի ավարտի հետևանքները: Ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին դիմումը: Դատարանի կողմից Ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին գործի քննությունը: Անհատ ձեռնարկատիրոջ սնանկության առանձնահատկությունները: Ֆիզիկական անձանց սնանկության առանձնահատկությունները: Սնանկության պարզեցված ընթացակարգերը: Լուծարվող պարտապանի գործի քննության առանձնահատկությունները: Բացակայող պարտապանի սնանկությունը: Վերագրանցում չանցած իրավաբանական անձանց սնանկության առանձնահատկությունները: Սնանկության վերաբերյալ գործի ավարտը կառավարչի ներկայացմամբ

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (05.07.1995թ., 27.11.2005թ., 06.12.2015թ փոփոխություններով)
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված 1998թ.
3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունված 2018թ
4. "Սնանկության մասին" ՀՀ օրենք, ընդունված 25.12.2006թ.

Հիմնական գրականություն

5. Բարսեղյան Տ.Կ., Գործարարական իրավունք: Դասագիրք, Եր.: ԵՊՀ. Հրատ., 2009
6. Գյուլնազարյան Գ., Սնանկացման (անվճարունակության) ինստիտուտը գործարարական իրավունքում, 2018թ.
7. Մարտին Ջ., Աթկինս Ս., Բրեթեգ Ռ., Մարկոսյան Տ., Ասատրյան Վ., Հայաստանում սնանկության ոլորտի օրենսդրության զարգացում // ռազմավարական զեկույց
8. Ավագյան Գ.Կ., Դաղունց Տ.Կ., Հովհաննիսյան Հ.Ա., Մարկոսյան Տ.Ա., Սահակյան Տ.Գ., Փոլ Ջ. Օմար, Սնանկության վարույթը Հայաստանի Հանրապետությունում

(գիտագործնական ձեռնարկ)։ Ընդհանուր խմբագրությամբ՝ Տ.Ա. Մարկոսյանի, Եր., Արդարադատության ակադեմիա, 2022

9. Карелина С.А, Механизм правового регулирования отношений несостоятельности, 2008
10. Несостоятельность (банкротство) кредитных организаций: Учебно-практическое пособие. Учебное пособие. Тонусян Г.А., Викулин А.Ю. М., 2002.
11. Банкротство в России: Вопросы истории, теории и практики. Учебное пособие. Гаврилова В.Е. М., 2003.
12. Витрянский В.В. Комментарий к Федеральному закону «О несостоятельности (банкротстве)Է. Постатейный, научно-практический. 2002.
13. Банкротство: Вопросы правоспособности должника. Семина. М., 2004.
14. Ежов Ю.А.Банкротство коммерческих организаций., 2005.
15. Белых В.С., Дубинчин А.А., Скуратовский М.Л. Правовые основы несостоятельности (банкротства). М., 2001.
16. Ежов Ю.А. Банкротство коммерческих организаций. – М., 2006.
17. Жилинский С.Э. Правовые основы предпринимательской деятельности. М., 2003.
18. Карелина С.А. Правовое регулирование несостоятельности (банкротства) / Под ред. Волтерс Клувер. – М., 2006.
19. Ткачев В. Н. Несостоятельность (банкротство) в Российской Федерации. Правовое регулирование конкурсных отношений. М. 2006 г.
20. Дубинчин А.А. Мировое соглашение в деле о банкротстве. Проблемы теории и практики // Хозяйство и право. 2000. № 7.
21. Ильина Е. Теоретические аспекты правового регулирования несостоятельности. Конкурсное производство // Хозяйство и право. 2000.№ 2
22. Никитина О.А. Мировое соглашение // Вестник ВАС РФ. 2001. № 3.
23. Никитина О.А. Конкурсное производство. 2001.
24. Попондопуло В.Ф. Конкурсное право. Правовое регулирование несостоятельности предпринимателей. М., 1995.
25. Телюкина М.В. Конкурсное право: Теория и практика несостоятельности (банкротства). М. 2002 г.